



Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՀԱՆԱ ՄԱՐՈՒԲՅԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՏՊԱՐԱՆԻՑ

Մեր ժողովրդի մշակույթի պատմության մեջ Մայր Աթոռ և Էջմիածնի տպարանի հիմնադրումը հայրենի հողի վրա մեծ երեւոյթ էր:

Երկու հարյուր տարի է անցել այդ օրվանից: Հոբելյանական այս տարեդարձի առիթով շատ կարևոր է և այժմեական անդրադառնալ Մայր Աթոռի տպարանից լույս տեսած հայ եկեղեցու դավանաբանության վերաբերյալ հրատարակություններին, թե՛ «Արարատ» ամսագրում (1868—1919) և թե՛ առանձին գրքերով:

Հայ դավանաբանական գրականությունը սկիզբ է առնում Ե դարի 80-ական թվականներին և սահակ-մեսրոպյան գրական-մատենագրական, կրթական գործունեության շրջանում¹:

Հայ դավանաբանական գրականությունը, որը «մեր եկեղեցական գրականության ամենահարուստ ճյուղերից մեկն է հանդիսանում»², «մաքատման ու պայքարի մի գրականություն է» ոչ միայն ի պաշտպանություն հայ եկեղեցու ուղղափառության, այլ նաև հայապահպանման և հայ մկրտագրի ինք-

նորությունային տեսակետից «ազգային մի գործ»³:

Ե դարում հայ դավանաբանական միտքն ու քրիստոսաբանական մտածողության արժեքավոր էջերից են և. Սահակ Պարթևի, և. Մեսրոպ Մաշտոցի գրած թղթերը 431—440 թթ. Պրոկղ պատրիարքին, Ակակիոս միտրոպոլիտին, ապա և մույն դարի 80-ական թվականներին Մովսես Խորենացու դավանաբանական թուղթը, որը կոչվում է «Երանելի մեծի Քերթողահօրն Մովսիսի Խորենացի եպիսկոպոսի թուղթ» և Հովհանն Մանդակունու «Ապացոյց յերկուց քննութեանց ասել գիրկիչն կամ մի քննութիւն» ճառը, ինչպես նաև Եղնիկի, Եղիշեի և Փարպեցու մատենագրության կրոնական, ջատագովական գրվածքները:

Այս երկերում հայ եկեղեցին իր դիրքը ճշտել է դավանաբանական հարցերում, որից հետագայում երբեք նա չի շեղվել:

Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Արարատ» ամսագիրը իր հրատարակության առաջին իսկ օրերից, 1868 մայիս, եղել է հայ դավանաբանական մտքի հանդեպը, հայ եկեղեցու ուղղափառության պաշտպանության ամբիոնը, մեր եկեղեցու դավանաբանական գրականության մվիրված բնագրերի հրատարա-

¹ Մատենագիտություն «Արարատ» ամսագրի, 1970, Մայր Աթոռ և Էջմիածնի տպարան, էջ IV:

² Կարապետ Տ. վրդ. Տեր-Մկրտչեան և Երուանդ վրդ. Տեր-Մինասեան, Տիմոթեոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրոս Հակաճառութիւն առ սահմանակալս ի ժողովում Բաղկեղովմի, և, Էջմիածին, 1908, էջ 6:

³ Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հտր. Ա, էջ 80:

⁴ Գիրք թղթոց, մատենագրութիւն նախնաց, Տըփ-դիս, 1901:

կույթամբ և ուսումնասիրությամբ... «Կրոնականին մեջ պիտի դրվին եկեղեցական կարգաց և արարողությանց վրա տեղեկություններ, կաթողիկոսաց գործեր, Սուրբ Հարց գրվածքներ (Ընդգծումը մերն է—Է. Բ. Մ.), ազգային մատենագրաց կենսագրություններ և ձեռագիր մատենից ծանոթություններ»:

Տարիների ընթացքում Մայր Աթոռում «Արարատ»-ի շուրջ համախմբվեց ինչպես հայագիտության, այնպես էլ աստվածաբանության նկիրված քաջահմուտ, մասնագետ հոգևորականների մի խումբ, որը լուրջ և գիտական ուսումնասիրություններով առաջ մղեց հայ դավանաբանական միտքը, արժեքավոր հետազոտությունների հրատարակությամբ⁵:

«Արարատ»-ում աստվածաբանական-դավանաբանական, եկեղեցագիտական բնույթի արժեքավոր հոդվածներ և ուսումնասիրություններ են ստորագրել առաջին խմբագիր Արև արքեպ. Մխիթարյանը՝ «Հայոց ազգի դարձն ի քրիստոնեություն», «Անընդհատ շարունակությունն առաքելական յաջորդության ուղղափառ ս. եկեղեցու հայոց», «Ամենասուրբ Երրորդություն», «Պատմություն ժողովոց հայց. եկեղեցույ», «Պատմություն հալածչաց, ուրացողաց և հերձուածողաց և բաժանելոց յեկեղեցեաց հայոց». Հուսիկ վրդ. Մովսիսյան՝ «Հայ եկեղեցու պատմություն», Օրմանյան արքազան՝ «Աթոռ Հայաստանեայց», Վահրամ եպս. Մանկունի՝ «Հայց. եկեղեցույ անցեալն», Գարրիել եպս. Ալվազյան (Ալվազովսկի)՝ «Նիկոլ եպս. և պատմություն դարձին հայկազանց Լեհաստանի ի կաթողիկոսին», Արշակ Տեր-Միքելյան՝ «Աստուածաբանական գիտելիքներ»-ի մի ամբողջ շարք (1893, էջ 7, 117, 219, 299, 383, 487, 566, 679): Ամսագրի 1879 թվականին հրատարակվում է նաև «Արքոց վարդապետացն հայոց Մովսիսի և Դավթի հարցմունք ըստ երկաթնակացն» ճառի բնագիրը, իսկ 1892 թվականին՝ Միաբանի երկու կարեվոր աշխատությունները. «Անանիա Նարեկացի, գիր խոստովանութեան» և «Գիրք հերձուածոց» բնագրերը:

1895 թվականից սկսած «Արարատ»-ում հրատարակվում են հայ դավանաբանական մտքի ուսումնասիրության նկիրված գիտական լուրջ կշիռ ունեցող հոդվածներ, երբ արդեն Մայր Աթոռում պատրաստվել էր հմուտ աստվածաբանների երիտասարդ և խոստումնալից մի սերունդ, օժտված գերմանական կրթությամբ, և որը ապարիզ էր իջնում հայ ժողովրդի կրոնական, մշակու-

թային, հայրենասիրական զարթոնքին նվիրվելու և ծառայելու խոստումով և կոչումով: Այս նոր սերունդը կարողացավ իր հմտությամբ, համալսարանական պատրաստությամբ և կայուն իր գիտելիքներով, հայ եկեղեցու դավանության վերաբերյալ իր գիտական ուսումնասիրությունների, հետազոտությունների մեջ մտցնել աստվածաբանական սխառն: Այդ աստվածաբան սերնդի գլուխն էր կանգնած Կարապետ վարդապետ (հետագայում՝ եպիսկոպոս) Տեր-Մկրտչյանը:

Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանի խմբագրության տարիներին, 1894 ղեկավարներ—1899, «Արարատ»-ը թևակոխում է իր պատմության ամենաբեղուն մեկ շրջանը, հայագիտական և մանավանդ դավանաբանական հարցերի ուսումնասիրության և հրատարակության տեսակետից:

1895 թվականից սկսած «Արարատ»-ը ունենում էր նաև մասնավոր «Յակուած» նոր բաժինը, ուր հայ եկեղեցու դավանության վերաբերյալ հրատարակվում են մի շարք հնագույն բնագրեր և ուսումնասիրություններ:

«Արարատ»-ի 1896 թվականի ապրիլի համարում (էջ 155) Կարապետ վարդապետը ստորագրել է մի ընդարձակ ու հետաքրքիր ուսումնասիրություն «Բնության խնդրի նկատմամբ մեր և Մխիթարյան հայրերի ունեցած հայացքը» թեմայի շուրջ: Հոդվածը շարունակվել է նաև ամսագրի օգոստոս համարում, էջ 353, «Կրկին բնության խնդիրը և Մխիթարյան հայրերը» թեմայով:

Հոդվածը հայ եկեղեցու դավանության պաշտպանության նկիրված մի կոտ և հույակապ ուսումնասիրություն է, գիտականորեն և մատենագրական հարուստ փաստերով հիմնավորված, Բրիտոսի երկու բնությանց միավորության վարդապետության մասին, հայ եկեղեցու դիրքի շուրջ:

Կարապետ վարդապետը «Արարատ»-ի 1896 թվի հունվարի համարում, էջ 3—4, ստորագրել է նաև մի այլ հոդված «Աստուածայախոնութեան տօնի միշտ օրը ըստ պատմութեան», ուր ապացուցում է, որ «քննադատական ստույգ պատմություններով Բրիտոսի ճննդյան և մկրտության հիշատակները հունվարի 6-ին կատարելու մեջ իրավունքը հայ եկեղեցու կողմն է» և թե հայ եկեղեցու հայրապետները և վարդապետները այդ հարցի վերաբերյալ «բանակույի մեջ գործ էին դնում իրենց եկեղեցվու հնավանդ սովորությունը օտարների դեմ պաշտպանվելիս», և թե մեր եկեղեցին «հունվարի 6-ին կատարելով աստվածահայտնության տոնը հետևում է մինչև Դ դար ընդհանուր եկեղեցու մեջ ընդունված ավանդության» (էջ 3): Հայ

⁵ Արարատ, 1868, Յառաջաբան, էջ 3:

⁶ Մատենագիտություն «Արարատ» ամսագրի, էջ III:

եկեղեցին անփոփոխ պահելով հնախանդ «նախնական սովորությունը», ցույց էր տալիս իր «հարազատ և ավանդապատ լինելը և շարունակում է պահպանել այն խորհրդավոր կապը, որ կա Քրիստոսի և ծննդյան և մկրտության մեջ» (էջ 4):



Ա. Գրիգոր Լուսաորիչ. Յանվարի Գնանում ճառք.
Մայր Աթոռ և. Էջմիածին, 1894 թ.

«Արարատ»-ի նույն համարի (1896) «Յանվարած» բաժնում (էջ 49—52) Կարապետ վարդապետը ի հաստատություն իր տեսության, հրատարակել է եկեղեցու հին հայրերի վկայությունները ի նպաստ հունվարի 6-ին, այն քաղելով Մայր Աթոռի ձեռագիր «Գիրք թղթոց» դավանաբանական ժողովածուից, հետևյալ վերնագրով. «Վկայությունը վասն ծննդեան Քրիստոսի և մկրտության տալելի ի միում ատուր ի յունուարի վեցն»: Վկայությունները բերված են «ի Կղեմայ յառաքելաառնման կանոնացն, Մակարայ Երուսաղեմայ հայրապետին, Յովհաննու Ե-

րուսաղեմայ հայրապետին, Նեկստեայ Հոռմայ հայրապետին, Գրիգորի աստուածաբանի, սրբոյն Բարսի, Հեպողիտայ եպիսկոպոսի, Սեբերիանոսի եպիսկոպոսի ի Դուխաու անտարանի մեկնությունեն, ի թղթին Մելիտոնի եպիսկոպոսի, Կիպրիանոսի եպիսկոպոսի» և այլն: Այնուհետև վկայություններ հայ վարդապետներից. «Յովհաննիսի հայոց կաթողիկոսի, Գրիգորի Արծրունեաց եպիսկոպոսի, Կոմիտասի հայոց կաթողիկոսի, Ստեփաննոսի Սիմեաց եպիսկոպոսի, Անանիայի հայոց վարդապետի, Ներսէսի (Կապեցոյ) հայոց կաթողիկոսի» (Շնորհալի) և այլն:

«Արարատ»-ի 1896 ապրիլ համարի «Յանվարած»-ում (էջ 192—199) Կարապետ վարդապետը հրատարակել է ձեռագրերի համեմատություններով ու ծանոթագրություններով «Յովհաննու իմաստասիրի, հայոց կաթողիկոսի, խոստովանության անշարժ յուսոյ մարմնացելոյ հանին Քրիստոսի, և ընդդէմ դաւանողաց գմի Քրիստոս յերկուս բնութիւն» ճառք: Մայիսի համարի «Յանվարած»-ում (էջ 252—256)՝ «Թուլոյ Յովհաննու Երուսաղեմի եպիսկոպոսի առ Արսա աղուանից կաթողիկոս» թուղթը: Հոկտեմբեր համարի «Յանվարած»-ում (էջ 477—488)՝ «Պատասխան ի հայոց թղթոյն աղուանից Վրթանիսի Քերթոռի»: Նոյեմբերի «Յանվարած»-ում (էջ 531—536)՝ «Թուլոյ Կոմիտասայ հայոց կաթողիկոսի ի Պարսա»:

Բազմահմուտ քանակեր, մատենագետ Գալուստ Տեր-Մկրտչյանը (Միաբան) «Արարատ»-ի 1902 թվի փետրվար համարում (էջ 183—200) հրատարակել է ծանոթագրություններով և ձեռագրական համեմատություններով «Պետրոս Սիմեաց եպիսկոպոսի հարցմունք յաղագս մարմնաորությունեան Տեառն զանազան»՝ Վաչագանի Աղուանից իշխանի ընդ Պետրոսի Սիմեաց եպիսկոպոսի և իմաստասիրի», և ապա էջ 200—203, նույնի՝ աշխնքն «Երանելոյն Սիմեաց եպիսկոպոսի յաղագս Հաատոյ» ճառք:

Գալուստ Տեր-Մկրտչյանը «Արարատ»-ի 1902 մարտ-ապրիլ համարներում հրատարակել է «Ստեփաննոսի իմաստասիրի ասացելով վասն անապականության մարմնոյն որ աճէ և նուազէ՝ ապականացու է. և վասն զի մարմինն Քրիստոսի աճէր և զարգանայր և ապականացու ոչ էր, զի Աստուծոյ մարմին էր՝ վկայութիւնք սրբոց և աստուածազանցից, որք անապական խոստովանին յարգանդէ և յաիտեանս յաիտեանից» ճառք:

«Արարատ»-ը զբաղվել է նաև ընդհանուր բնույթ կրող աստվածաբանական-դավանաբանական հարցերով:

«Արարատ»-ի 1917 թվականի ապրիլ-մա-

յիս համարում՝ էջ 355—360, հունիս-հուլիս՝ 449—506, սեպտեմբեր-դեկտեմբեր՝ 806—812, 1918՝ 49, լույս է տեսնում մասնառու գիտնական Ֆ. Մ. Ռոսելկինի 1915 թվականի հրատարակած մի ընդարձակ աշխատություն, որը կոչվում է «Կ. Պոլսի Փոտիոս պատրիարքի առաջին պատրիարքությունը», որի Թ գլուխը (էջ 237—262) նվիրված է հույն պատրիարքի ջանքերին, հայ եկեղեցուն հունական եկեղեցու հետ միացնելուն։ Օստ կարևոր աշխատություն է սա՝ թարգմանված Հուսիկ արքայ. Տեր-Մովսիսյանի կողմից, չափազանց արժեքավոր բացասություններով, սրբագրություններով և լրացումներով։

Հայ եկեղեցու դավանության մասին արժեքավոր ու պաշտոնական մի ժողովածու է «Գիրք թղթոց»-ը, որը հորինվել է Ը դարում Դվինի հայրապետանոցում, քաղկեդոնական վեների բուն ժամանակաշրջանում, Հովհան Օմեցեցու օրով, դավանաբանական նպատակներով, հայ եկեղեցու ուղղափառությունը պաշտպանելու համար մատուցված աշխատության և քաղկեդոնականության դեմ։

«Գիրք թղթոց»-ի կազմությունը պայմանավորվում էր իր ժամանակի մեր եկեղեցու և երկրի գոյավիճակով։

Օմեցեցին 719 թվականին Դվինի Ե ժողովում արտասանած իր ճառում նշում էր քաղկեդոնական վեների և արաբական հալածանքների հետևանքով խանգարված հայ եկեղեցական կարգն ու կանոնը և ուղղափառության սպառնացող վտանգը, և աշխատում էր անաղարտ ու ամբողջական պահել հայ եկեղեցու դարավոր դավանաբանությունը։

«Կամեցայ գրովանդակ գառ ի մոցանեն—մեր եկեղեցու հայրերից—կանոնական սահմանեալ բանն ի միում տեղոջ գեղեցկագոյն մատենին ի հայրապետանոցի աստ արձանացուցանել»։

Ե—Է դարերի թղթակցությունները դասավորված են առանձին խմանքով և ժամանակագրական կարգով։ Ժողովածուում առաջին հերթին տեղ են գրավել ա. Սահակի, ս. Մեսրոպի, Պրոկղ պատրիարքի և Ակակիոս միտրոպոլիտի միջև փոխանակված դավանաբանական թղթերը։ Վեցերորդը Խորենացու վերոհիշյալ թուղթն է և ապա Մանգակյանու ճառը։

«Գիրք թղթոց»-ը, որը հրատարակվել է Թիֆլիսում, 1901 թվականին, քաղկեդոն է 98 դավանաբանական թղթերից, որի բովանդակությունը հասնում է Ե դարից մինչև ԺԳ դար։

«Գիրք թղթոց»-ը թեև չի հրատարակվել Մայր Աթոռի տպարանից, բայց այն կապված է դարձյալ Մայր Աթոռի անվան ու

գործունեության հետ, այն իմաստով, որ նրա հրատարակիչ բազմամյա գիտնական ու մանկավարժ Կարապետ Կոստանյանը Գեղորգյան ճեմարանի տեսուչն էր, և «Գիրք թղթոց»-ը հրատարակության է պատրաստել Մայր Աթոռում, ս. Էջմիածնի մատենադարանի ձեռագրերի օգտագործմով։

«Գիրք թղթոց»-ի մեջ հրատարակված դավանաբանական թղթերը «մեծ արժեք ունեն իբրև պատմության առաջնակարգ աղբյուրներ, քանի որ գրված են իրական եղելությունների աղբյուրով։ Դրանց մեջ տեսնում ենք հեղինակների հմտությունը դավանաբանական և այլ խնդիրների նկատմամբ, նրանց ձգտումն ամեն եռանդով պաշտպանելու հայ եկեղեցու դավանությունը, անկախությունն ու միությունը»⁷։

«Հայոց Հայրապետները, նույնիսկ 5-րդ դարից սկսած, երկարակության հակառակ դիրք են բռնել, և հայ եկեղեցու դավանությունը եղել է առաջին երեք տիեզերական ժողովներից»⁸։

Մայր Աթոռի տպարանից 1865 թվականին լույս էր տեսնում Ներսես Շնորհալու «Թուղթ Ընդհանրական»-ը, «գրեալ առ համօրէն ազգքս, առ եկեղեցականս և առ քաղաքականս, վասն ուղիղ հաւատոյ և բարի վարոց» (էջ 1—112։ Ընդգծումը մերն է—Հ. ք. Մ.)։

«Ընդհանրական»-ի առաջին էջերում Շնորհալին (11—23) ներկայացնում է հայ եկեղեցու «գիտատու դաւանութեան ճշմարտութիւնն ըստ ուղղափառ եկեղեցոյ դաւանութեան... ոչ նորոգ ինչ գրելով, այլ ի վերայ հիման առաքելոց և մարգարէից և հարց արքոց» (էջ 11—12)։

«Ընդհանրական»-ի սույն հրատարակության մեջ տեղ են գրավել մասնաշաղկապ հունաց Կիո Էմմանուել կայսրին, Կ. Պոլսի Միքայել պատրիարքին գրած «Թուղթ միաբանութեան գրեալ առ յոյնս՝ վասն միութեան եկեղեցոյ» երեք դավանաբանական մամուլները ի պաշտպանություն հայ եկեղեցու ուղղափառության։ Այդ թղթերն են.

1. Գիր խոստովանութեան հաւատոյ Հայց. եկեղեցոյ (էջ 117—144)։

2. Մահմանք հաւատոյ Հայց. եկեղեցոյ (էջ 163—176, որի աշխարհաբար թարգմանությունը տես «Էջմիածին» ամսագիր, 1969, № Բ, էջ 40—46), և

3. Յաղագս պաւնդութեանց եկեղեցոյ (էջ 177—198)։

Սույն թղթերում Շնորհալին շարադրում է հայ եկեղեցու դավանական դիրքը և ընդարձակորեն խոսում Քրիստոսի աստվածային և

⁷ Մ. Արքեպան, նույն տեղ, էջ 362։


⁸ Նույն տեղ, էջ 616։

մարդկային «Բնությանց միության կամ միավորության մասին, մերժելով և հերքելով Նեստորն ու Եվտիքեաք», պնդելով «յերկուց բնությանց մի լեալ» բանաձևի վրա, համաձայն հայ եկեղեցվո դավանության, որ ո՛չ բնություններուն կորուստը կամ շփոթումը, այլ պարզապես միավորությունը կպաշտպանե. «ասեմք մի բնութիւն ի Զրիստոս, ո՛չ ըստ Ետիքեայ, այլ ըստ Կիրոյի» (Մաղա-

«զմերոյ լուսաորութեանցն լուսաոր վերակացու... Եւ մերոյ լուսաորութեան մախաշաիղ և մահապետ»⁹:

Ըստ մատենագրական հնագույն վկայությունների, Լուսավորչին են ընծայվում կրոնական մեծ արժեք ներկայացնող կարևորագույն երկու աշխատություններ.

1. Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի.
2. Յանախապատում ճառք լուսաորք:



Դավանաբանական հրատարակություններ Մայր Աթոռի տպարանից (1908—1914)

քիա արքեպ. Օրմանյան, Ազգապատում, հուր. Ա, էջ 1886 և 1417):

1973 թվականին լրանում է Ծնորհալու մահվան 800-ամյակը (1173—1973): Այս առթիվ «Էջմիածին» ամսագիրը հանգամանորեն և մասնավոր կարևորությամբ անդրադառնալու է Ծնորհալու դավանաբանական մեծարժեք ժառանգությանը:

Այժմ պետք է խոսել Մայր Աթոռի տպարանից հրատարակված առանձին հետևյալ արժեքավոր դավանաբանական ժողովածուների կամ աշխատությունների մասին.

Ա. «Սրբոյ Հօրն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսաորչի
Յանախապատում ճառք
Լուսաորք»:

Ս. Գրիգոր Լուսավորչին է հանդիսանում ոչ միայն հայ հոգիների լուսավորիչ, այլ նաև

Լուսավորչի «Վարդապետութիւն»-ը գրտնրվում է Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ¹⁰:

Լուսավորչի «Վարդապետութիւն»-ը մեր եկեղեցական մատենագրության հնագույն և առաջին կրոնական գրվածքն է, մի ընդարձակ ու հույակապ ճառ, 450 առանձին հատվածներից բաղկացած, ուր խոսվում է քրիստոնեական կրոնի հիմնական վարդապետության, հավատո գլխավոր կետերի, բարոյական սկզբունքների մասին, տիրական ջեշտով և համոզման կրակով¹¹:

⁹ Մ. Խորենացի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1913, էջ 247:

¹⁰ Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1914, էջ 183—385:

¹¹ Ա. Հատիսյան, Ս. Գրիգոր Լուսավորիչ՝ որպէս մատենագիր, «Էջմիածին» ամսագիր, 1967, №№ Է—Ը, էջ 22—27:

Լուսավորչին ընծայված երկրորդ կարևոր գործը «Յանախապատում»-ն է, որը ունեցել է չորս տպագրություն. Կ. Պոլիս՝ 1797, Կ. Պոլիս՝ 1824, Վենետիկ՝ 1838, և Էջմիածին՝ 1894:

Լուսավորչին ընծայված այս երկու աշխատությունների՝ «Վարդապետություն սրբոյն Գրիգորի» և «Յանախապատում»-ի մեջ բովանդակության, արտահայտության ձևի, ոճի և լեզվի տեսակետից շատ նմանություններ կան:

«Յանախապատում»-ի Դ տպագրությունը կատարվել է Մայր Աթոռում: Սույն հրատարակությունը ունի հետևյալ տիտղոսաթերթը.

«Սրբոյ Բօրն մերոյ

Երանելոյն

Գրիգորի Լուսատրչի

Յանախապատումն ճառք

Լուսատրք

Յառաջաբան, համեմատութեամբ

և ծանօթութիւններով

Ա. Տէր-Միքէլեանի

Վաղարշապատ

Տպարան Մայր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի
1894—ՌՅԽԴ»:

«Յանախապատում»-ը բաղկանում է 354 էջերից, այդ թվում «Յառաջաբան հեղինակի», է—ԺԷ, բնագիր՝ 1—279 էջ, Լուսաբանութիւնը՝ 280—313 էջ, Ընթերցումներ՝ 314—348 (Մայր Աթոռի մատենադարանի ձեռագրերի համեմատությամբ), Յանկ միտք՝ 349—352, և Յանկ գլխակարգութեանց՝ 353—359:

«Յանախապատում»-ը դալմանաբանական, վարդապետական, հոգևոր ու բարոյական աստվածաբանության մի «լուսատր վարդապետութիւն» է, «գեղեցիկ և աստուածային գանձ», «հոգևոր բարութեամբ լի սեղան», «հեմանան այն արդիւնատր, անսպակ ողկուզոյ արեմավատակ բազմաբերան Հօրն մերոյ սրբոյն Լուսատրչի... ի կենդանի տախտակս սրտից որդիացեալ ժողովրդեան նորա»: «Մատենան հոգեյից և հոգեշահ վարդապետութեան հաւատոյ և վարուց աստուածայնոցս, առատաշնորհ լուսազարդ սուրբ մատենան», ... «Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ, իբրև գլուխ և դասապետ հոգեբաշխ մատենից սրբոց, որ հարց մերոց սուրբ և հոգեշահ բանիք իւրով յաւետարանական բանիք իբրև կաթն ջամբեաց», «լուսատր վարդապետութիւն և խրատք ոգեշահք, ազգի ազգի թշկարանք ախտացեալ հոգով» (Յիշատակարաններ, ձեռագիր և տպագիր):

Լուսավորիչը ԺԷ ճառում նշում է «Յանախապատում»-ի գրության նպատակը. «Գրել ձեզ և ուսուցանել կամիմ եղբարք իմ

և որդիք, զորս ի Քրիստոս աւետարանան ծնայ»¹²:

Սույն հոդվածի նպատակից դուրս է խոսել «Յանախապատում»-ի իսկական հեղինակի, գրության ժամանակի, սկզբնագրի լեզվի և այլ բանասիրական, մատենագրական հարցերի մասին:

Մեր հին մատենագիրների, պատմիչների վկայության վրա մեր եկեղեցին և հայ հին բանասիրական դպրոցն ընդունում են, որ «Յանախապատում»-ի հեղինակը ս. Գրիգոր Լուսավորիչն է:

Մեզ համար շատ կարևոր է «Յանախապատում»-ի կրոնական մատենագրական բովանդակությունը, անկախ այն բանից, թե ո՞վ է բուն հեղինակը, Լուսավորիչը, թե ս. Մեսրոպը: Երկու անուններն էլ պաշտելի և երախտաշատ անուններ են մեր եկեղեցու և մեր մատենագրության համար:

«Յանախապատում»-ը բաղկանում է 23 ճառերից, որոնք ունեն խրատական, ուսուցողական (դիդակտիկ) բնույթ և նկարագիր:

«Այս ճառերուն մեջ աստվածային սրտով ու սիրով լեցուն հոգիե զատ, հունական հարց նմանության և անոնց լեզուն կրանեցնէ Գրիգոր... Մեր ազգին մեջ քիչ հայրապետք կրցած են աստվածության վրա խոսած ատենանին այն վարժ գրիչն ու լեզուն գործածել, որուն առաջին վարդապետը և հեղինակը ինքը ս. Գրիգորն է» (Հ. Գ. Զարբհանայան): «Յանախապատում»-ը հավատո և քրիստոնեական վարուց վերաբերյալ կենտրոն ՀԵՂԻՆԱԿՈՐԵՆ կրօնաւորե» (Մ. արք. Օրմանյան):

«Յանախապատում»-ի Ա.—Ե ճառերը ունեն դալմանաբանական նկարագիր: Լուսավորչի «աստուածաբանութիւն»-ը հիմնվել է Աստվածաշնչի, եկեղեցական ավանդության վրա և Նիկիական Հանգանակի բնույթ է կրում: Մյուս ճառերը նվիրված են աստվածային սիրո և արարչագործության, մարդու ստեղծման, բարո և չարի ծագման, ազատ կամքի, քրիստոնեական առաքինությունների, հավատի, հուշի, բարեգործության, պահքի, չափավորության, աշխարհի խաղաղության և հոգևոր շինության, սրբերի և նահատակների հիշատակը հարգելու հարցերին, հասարակական կյանքում գոյություն ունեցող անբարոյականության, մեղքերի: Հեղինակը ջանք չի խնայում նորադարձ հայ քրիստոնյաների սրտում արմատավորելու քրիստոնեական հավատն ու բարեպաշտությունը, սրբությունն ու առաքինությունը: ԺԷ ճառը հովվապետական մի թուղթ է՝ ուղղված հոգևորականությանը, որ մեծ Լուսավորիչը խոսում է հոգևորականության պարտական

¹² Յանախապատում..., Էջմիածին, 1894, էջ 102:

նությունների և պատասխանատվության մասին «ստացի Աստուծոյ և հաւատացելոց»:

«Յաճախապատում»-ի լեզուն պատկերավոր է և կենդանի: Մտածումների հոյուրությունն ու հստակությունը գեղագիտական մեծ հաճույք են պատճառում:

«Յաճախապատում»-ը մեծ արժեք է ներկայացնում մեր ուղղափառ դավանության համար որպէս «Արմատ հաւատոյ», որպէս «Հայաստանայց եկեղեցու առաքելական վարդապետության հիմնական աղբյուր և Գրքից հետո, որն անփոփոխ տալիս է դավանական և բարոյական բոլոր սկզբունքներն իբրև հիմունք և սահման նորա հավատարիմ որդիոց:

Ս. Գրիգոր Լուսավորիչն է մեր հոգևոր ծնողը. նա է մեր հոգեմկեր դաստիարակն ու քարեխոսը... որ առաքելոց խոսանած անդերը նորոգապես վարեւ և Քրիստոսի սերմերը ցանե հայոց արտերում... Հայ ազգը լուսավորող և վերածնող մեծ հոյ աստվածաբարբառ խրատների տակ կրթված հոգուց են բխում նրա ճառերը»¹³:

Մայր Աթոռի տպարանից լոյս տեսած դավանաբանական երկրորդ գիրքն է.

Բ. «Տիմոթեոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ Հակաճառութիւն

Առ սահմանեալսն ի ժողովոյն
Քաղկեդոնի

Ի լոյս ընծայեալ աշխատութեամբ
Կարապետ Ծ. վարդապետի
և

Երուանդ վարդապետի

Ս. Էջմիածին, տպարան Մայր Աթոռոյ
1908»:

«Հակաճառութիւն»-ը քաղկանում է հետեւյալ բաժիններից. Հրատարակիչների «Յառաջարան», էջ V—XXIV, «Բովանդակութիւն» XXV—XXXV, «Նախաբան» էջ 1, «Վկայութիւնք սրբոց հարանցն մերոց» կամ բուն «Հակաճառութիւն»-ը էջ 2—342, «Ծանկ վկայութեանց սուրբ Գրոց» էջ 343—354, «Ծանկ յատուկ անուանց» էջ 355—361, «Ծանկ նիւթոց» էջ 362—396:

«Հակաճառութիւն»-ի վրա առաջին անգամ ուշադրություն է դարձնում Մայր Աթոռի միաբան, հմուտ աստվածաբան Կարապետ Ծ. վրդ. Տեր-Մկրտչյանը 1897 թվականի մայիսին¹⁴ և ձեռագիրը պատրաստում է հրատարակության:

1906 թվականին Երվանդ վրդ. Տեր-Միւնասյանի ընկերակցությամբ «Հակաճառու-

թիւն»-ի ձեռագիրը արդեն պատրաստ էր դրվելու «գիտական աշխարհի դիմաց»¹⁵:

1908 թվականին Մայր Աթոռի տպարանից լոյս է տեսնում «Հակաճառութիւն»-ը, որը «Հայոց եկեղեցու դավանաբանական գրականության մեջ դարագլուխ է կազմել և առաջնորդ ու օրինակ հանդիսացել հայ դավանաբանների համար»¹⁶:

Քաղկեդոնի ժողովից հետո, Ե դարի կեսերին, մեր եկեղեցական մատենագրության մեջ սկսվում է դավանաբանական վեճերի մի ժամանակաշրջան, երբ քորթոքվում է միաբնակության և երկաբնակության միջև պայքարը, որը սուր կերպարանք է ստանում հաջորդ դարերում:

460-ական թվականներին դավանաբանական վեճերն արդեն արվել էին:

Քաղկեդոնը պատակտեց մեկ, ընդհանրական ու առաքելական եկեղեցին: Ստեղծվեցին ազգային եկեղեցիներ, կազմվեցին արեւմտյան և արևելյան եկեղեցիներ, որոնց միջև էլ սկիզբ առան ու շարունակվեցին դավանաբանական տարակարծություններ:

Հայ եկեղեցին չէր կարող հեռու մնալ այդ վեճերից:

Տիմոթեոս Կուզը Ալեքսանդրիայի պատրիարքն էր և պարագլուխը ուղղափառ միաբնակության: Տիմոթեոսը իր վտիտ, տկար մարմնի պատճառով կոչվում էր Էլարոս, այսինքն՝ կատու, հայերեն՝ կուզ:

Տիմոթեոս Կուզը իր ազդեցության և բուն գործունեության համար ժամանակակիցներից կոչվել է Մեծ¹⁷:

Տիմոթեոս Կուզը բարեկամական հարաբերություններ էր պահում Կյուրեղ Աղեքսանդրացու հետ, ջերմորեն պաշտպանում էր Կյուրեղի բանաձևը բնությունների հարցում. «Մի է բնութիւն Բանին մարմնացելոյ»:

Կուզը համարվում էր Ե դարի 60—70 թվականների ամենանշանավոր եկեղեցական հայրերից մեկը, իր գործունեությամբ և մատենագրական վաստակով, որից դուրս ու սարսափում էին քաղկեդոնականները, Հռոմի կայսրը, Պապն ու Կ. Պոլսի պատրիարքը: Կուզի անունը մեր դավանաբանների մոտ հիշվում է համահավասար կարևորությամբ Կյուրեղ Աղեքսանդրացու, Դիոսկորոսի և այլ նշանավոր միաբնակ եկեղեցական հայրերի շարքում¹⁸:

¹⁵ Յառաջարան, էջ VI:

¹⁶ Նույն տեղ, էջ VI:

¹⁷ Զաքարիա Հռոմոս, Եկեղեցական պատմութիւն, Կ. 1, էջ 22:

¹⁸ Գիրք թղթոց, Տիդիս, 1901, էջ 91, 94, 254, 300, 329, 401:—Նիքոսկոս Գանձակեցի, Հայոց պատմութիւն, Վենետիկ, 1885, էջ 21:

¹³ Նույն տեղ, էջ Ե:

¹⁴ «Արարատ», 1897, էջ 199—208:

457 թվականին Կուզը ընտրվում է Ալեքսանդրիայի Աթոռի պատրիարք, նշանակվում է Քաղկեդոնի ժողովը և եպիսկոպոսական Աթոռները մաքրում է քաղկեդոնականներից:

Մրվում էր պայքարը Ալեքսանդրիայի, Հռոմի և Կ. Պոլսի Աթոռների միջև:

Վերջապես, 460 թվականին Հռոմն ու Կ. Պոլիսը դաշնակցած դավադրությամբ Կուզին, ինչպես նրան անվանում էին իր հակառակորդները, «Արևելքի այդ ամենագլխավոր խողովարարին», զրկում են իր Աթոռից և արքայից Գալդրա, ապա Խեբսոն (Սև ծովի ափերը), ուր նա մնում է մինչև 474 թվականը:

Կուզը դատարկ չէր նստել իր աքսորավայրում: Ֆիզիկապես հեռու լինելով իր Աթոռից և իր ժողովրդից, թեև նա անմիջականորեն մասնակցություն չէր ունենում եկեղեցին հուզող դավաճանական վեճերի մեջ, այնուամենայնիվ նա գրականությամբ էր զբաղվում, հակաառաջդրություններ գրելով Քաղկեդոնի դեմ:

Այսպես Կուզը աքսորավայրում գրեց Քաղկեդոնի դեմ իր նշանավոր «Հակաառաջդրություն»-ը, որը քաղկեդոնում էր երկու գրքից. «Գրեցի և այժմ լեզուս մատենան», ինչպես ինքն է վկայում:

«Հակաառաջդրություն»-ի առաջին հատորը գրվել է լատիներեն, իսկ երկրորդը՝ հունարեն, «որը մինչև այժմ կորած էր, հրատարակվում է այստեղ առաջին անգամ հայերեն, նախնայաց թարգմանությամբ...»

Քաղկեդոնի ժողովի հակառակորդների դավաճանական ուղղության մասին մենք կարող ենք այժմ այս գրվածքի շնորհիվ գաղափար կազմել հենց իրենց ամենագլխավոր հակաքաղկեդոնականների խոսքերից, իսկ այս հանգամանքը ավելի է բարձրացնում այս գրվածքի արժեքը, որովհետև մինչև այժմ Տիմոթեոսից միայն հատակտորներ ունենք և մի երկու նամակ, պահված Զաքարիա Հոնտորի Եկեղեցական պատմության մեջ¹⁹:

476 թվականին Ջենոն կայսրը հրատարակում էր իր նշանավոր Հենեոսիկոն-հրովարտակը, որով դատապարտում էր Քաղկեդոնի ժողովը և արգելում «հնությունների մասին վեճերը» և պարտադրում առաջին երեք տիեզերական ժողովների հավատող դավանությունը:

Տիմոթեոս Կուզը վախճանվում է 477 թվականի հուլիսի 31-ին:

Տիմոթեոս Կուզի «Հակաառաջդրություն»-ը թարգմանվել է Դվինի հայրապետանոցում 480—484 թվականներին, Հովհան Մանդա-

կունու օրով: «Հակաառաջդրություն»-ը «առնմանված լինելով քաղկեդոնականների դեմ վեճերի համար, թարգմանիչն աշխատել է ըստ ամենայնի բառացի ճշտությամբ և բնագրին մոտ թարգմանել, որպեսզի վիճաբանությունների ժամանակ ոչ մի տեղիք չլինի թյուրիմացության»²⁰:

Թե ո՞ւմ ձեռով է թարգմանվել Կուզի «Հակաառաջդրություն»-ը, այդ հարցին չէ:

Բայց «Հակաառաջդրություն»-ը թարգմանվել է հակաքաղկեդոնական բուն վեճերի ժամանակ, որովհետև դա «ամենալավ զենքերն էր մատակարարում հայ եկեղեցականներին»՝ նեստորականության և քաղկեդոնականության դեմ մարտելու համար²¹, իրեն «զինարան Քաղկեդոնի վարդապետության դեմ: Այդ է, անշուշտ, պատճառը, որ Տիմոթեոսի «Հակաառաջդրություն»-ը այնքան վստ թարգմանվել է հայերեն»²²:

Հաջորդ դարերում մեր բոլոր դավանաբանները մեծապես օգտվել են Կուզի «Հակաառաջդրություն»-ից, հակաքաղկեդոնական իրենց գրվածքներում:

Ուրեմն, եզրակացնում է Մանուկ Աբեղյանը, հայ եկեղեցին և հայ ժողովուրդը «Ե դարի վերջին տասնամյակներում արդեն, իրեն արևելքի, բնականաբար, պաշտոնապես կանգնել են արևելյան քրիստոնյաների ուղղափառության տեսակետի վրա, այն էլ շատ որոշ կերպով, բնությունների նկատմամբ ըստ Կյուրեղ Ալեքսանդրացու, միաժամանակ և նշանակալից Երվանդի»²³:

Գ. «Կնիք հաւատոյ

Ընդհանուր սուրբ եկեղեցոյ

Յողդափառ և ս. հոգեկիր հարցն մերոց

Դաւանութեանց

Յաւորս

Կոմիտաս կաթողիկոսի

Համահաւաքեալ

Հրատարակութիւն

Կարապետ եպիսկոպոսի

Ս. Էջմիածնի

Տպարան Մայր Աթոռոյ

1914»:

Մայր Աթոռի տպարանից հրատարակված դավանաբանական գրականության հաջորդ մեծարժեք ժողովածուն «Կնիք հաւատոյ»-ն է:

Ժողովածուն ունի հետևյալ բաժանումները. հրատարակիչ Կարապետ եպ. Տեր-

²⁰ Մ. Աբեղյան, նույն տեղ, էջ 356 և 613: Տես նաև «Ծողակայք», Վաղարշապատ, 1913, Գաղութա Տեր-Մկրտչյանի հոդվածը՝ «Տիմոթեոս Կուզի Հակաառաջդրության հայ թարգմանության ժամանակը»:

²¹ Յաւաջարան, էջ XVI:

²² Նույն տեղ, էջ XXI:

²³ Մանուկ Աբեղյան, նույն տեղ, էջ 687:

¹⁹ Յաւաջարան, էջ XI—XII:

Մկրտչյանի բովանդակային «Նախաբան»-ը՝ էջ I—CXIX, «Բովանդակություն»՝ էջ CXXI—CXXVIII, «Գլխակարգություն համահապշին»՝ էջ 2, ապա «Կնիք հաւատոյ»-ի բուն քննադիրը՝ էջ 3—377, «Յիշատակարան»-ը՝ էջ 372, «Ցանկ յատուկ անուանց»-ը՝ էջ 373—380, «Ցանկ նիւթոց»՝ էջ 381—421, «Ցանկ վկայութեանց ս. Գրոց»՝ էջ 422—482, «Ցանկ ձեռագիր և տպագրեալ մատենից բաղդատութեան»՝ էջ 483—434, և «Ներածութեան և նիւթի ուսումնասիրութեան համար գործածուած գրքերը»՝ էջ 435—436:

Հրատարակիչ տ. Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը «Կնիք հաւատոյ» ժողովածուի ձեռագիրը գտել է 1911 թվականին, Դարաշամի (Ասորպատական) ս. Ստեփանոս Նախավկայի վանքում և, Մայր Աթոռի մատենադարանում գտնվող այլ ձեռագրերի համեմատությամբ և ծանոթագրություններով, այն պատրաստել է հրատարակության:

«Կնիք հաւատոյ» դավանաբանական ժողովածուն կազմվել է Դվինի հայրապետանոցում, Կոմիտաս կաթողիկոսի օրով (615—628), որպէս «պաշտոնական վավերագիր ժամանակակից հայոց եկեղեցու դավանության... անհավանական է, որ նա (Կոմիտաս կաթողիկոսը) որպէս գործունյա ներկայացուցիչը մեր եկեղեցու պատմության դավանանքների զարգացման տեսակետից, իր կենդանի մասնակցությունը քերած չլինի այս ժողովածուն կազմելու մեջ և յուր սատվածաբանական ըմբռնման կնիքը դրած նորա վերա» (Նախաբան, էջ X):

«Կնիք հաւատոյ»-ն երկրորդ կարևոր դավանաբանական ժողովածուն է: Այն «կազմըված է Տիմոթեոս Կուգի «Հակաճառութեան» հետևողությամբ»:

Սույն ժողովածուում համահավաքված են եկեղեցու ուղղափառ հայրերի գրվածքներից կտորներ, իբրև առանձին պատրաստ նյութեր՝ վիճաբանությունների ժամանակ սուրբ հայրերի խոսքերով հայոց եկեղեցու դավանությունը հիմնավորելու և պաշտպանելու համար²⁴:

«Կնիք հաւատոյ»-ի հրատարակիչ տ. Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը ժողովածուի կարևորության մասին գրում է, որ «ուղղափառ և ս. Հոգւի շնորհք առանձնապէս օժտված ընդհանրական եկեղեցու ընտրելագոյն ներկայացուցիչների այստեղ հառաջ քերած դավանական տեսությունները կնիք են դառնում և հաստատում, որ ժողովածուն կազմողների պաշտպանած հայոց եկեղեցվո դավանությունը նույնն է, ինչ որ ընդունել է մի և անբաժան «ընդհանուր սուրբ եկեղեցին», և որ խոստովանել պար-

տավոր է ուրեմն ամեն մի ճշմարիտ հավատացյալ անդամը»²⁵:

«Կնիք հաւատոյ»-ն Կոմիտաս կաթողիկոսի օրով Դվինի հայրապետանոցում խմբագրել է ժամանակի նշանավոր դավանաբան Հովհան Մայրագունեցին. «Եւ ի տրա (Կոմիտաս կաթողիկոսի) ժամանակ փայլէր վարդապետութեամբ Յովհան Մայրագունեցի, որում զկաթողիկոսութիւնն հաւատացեալ էր Կոմիտաս: Սա (Հովհան Մայրագունեցին) գրեաց երիս գիրս և զանուն իւր ոչ վերագրեաց ի նոսա..., անուն միոյն՝ Խրատ վարուց, անուն միւսոյն՝ Հաւատարմատ, և անուն միւսոյն՝ Նոյեմակ»:

«Կնիք հաւատոյ»-ն թեև խմբագրվել է Կոմիտաս կաթողիկոսի օրով, բայց «նույն դրությամբ չի մնացել, ինչպես խմբագրված պիտի լինէր Կոմիտաս կաթողիկոսի ժամանակ, այլ փոփոխության է ենթարկվել և նոր նյութեր են ավելացել վրան»²⁶:

«Կնիք հաւատոյ»-ում հիշվում են հայ եկեղեցու ուղղափառ հավատի դավանությունը հաւատարող հետևյալ նշանավոր եկեղեցական ուղղափառ հայրերի գրվածքներից քերված վկայություններ, ըստ հետևյալ հերթականության.

Դիոնիսիոս Աթենացի, Ռեթեոս փիլիսոփա (առաքելական շրջան), «որոնք մեր եկեղեցում տոնվող ընդհանրական եկեղեցվո երկուստասան վարդապետների շարքում առաջին տեղն են բռնում»²⁷, ս. Իրենիոս (Բ դար)՝ Լիոնի կամ Լուգդունումի եպիսկոպոս, Հիպոլիտ (Գ դար), Դիոնիսիոս Ալեքսանդրացի (Գ դար), Գրիգոր Սքանչելագործ (Գ դար), Պետրոս Ալեքսանդրացի (Դ դար), Ֆելիքս Ա. (Հռոմի եպիսկոպոս, Գ դար), Ալեքսանդր Ալեքսանդրացի (մասնակից Նիկիայի Ա տիեզերական ժողովին, Դ դար), Եփրեմ (ասորի եկեղեցու ուղղափառ մեծ վարդապետ, Դ դար), Աթանաս Ալեքսանդրացի՝ «սին եկեղեցու» (մասնակից Նիկիայի ժողովին, Դ դար), Հուլիոս (Հռոմի եպիսկոպոս, ժամանակակից Աթանասի, Դ դար), Կուրել Երուսաղեմացի (մասնակից Կ. Պոլսի տիեզերական ժողովին, Դ դարի վերջ), Եվսեբիոս Եմեսացի, (Դ դար), ապա Դ դարի երեք մեծ կապաղովկացի եկեղեցական հայրեր՝ Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Աստվածաբան-Նագիազանցի և Գրիգոր Նյուսացի, Եպիփան Կիպրացի (Ե դար), Հովհան Ոսկեբերան (Ե դար), Մերքրիանոս (Ե դար), որը «շատ էլ լավ անուն չի թողել եկեղեցվո պատմության մեջ, հա-

²⁵ Կնիք հաւատոյ, ներածութիւն, էջ XI:

²⁶ Նույն տեղ, էջ XXVII:

²⁷ Նույն տեղ, էջ XXXIII:

²⁴ Նույն տեղ, էջ 382:

կառավարող Ոսկերեքանի»²⁸, Կյուրեղ Ալեքսանդրացի (Եփեսոսի տիեզերական Գ ժողովի նախագահ, Ե դար), Պրոկոլ (Կ. Պոլսի պատրիարք, Ե դար):

Մինչև այժմ հիշված եկեղեցական հայրերը ապրել և առեղծագործել են մինչ Քաղկեդոնի ժողովը:

«Կնիք հաւատոյ» ժողովածուում հիշվում են նաև «Յետ-Եփեսոսեան շրջանից» վկայություններ՝ «քերված բնականաբար միայն հակա-քաղկեդոնական ընդհանուր եկեղեցւո կողմից չճանաչված» եկեղեցական հայրերից, այդ թվում՝ Դիոսկորոս Ալեքսանդրացուց (Ե դար), Տիմոթեոս Կուզից (Ե դարի վերջ) և Փիլիքսենոսից (Զ դար):

Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը հանգամանորեն խոսում է նաև վերոհիշյալ եկեղեցական նշանավոր հայրերի կենսագրության, նրանց որոշ գրվածքների հայերեն թարգմանության ժամանակի (Ե դար) և դավանական արժեքի և «Կնիք հաւատոյ» ժողովածուում տեղ գտնելու պատճառների մասին²⁹:

«Կնիք հաւատոյ»-ում՝ ընդհանուր եկեղեցական գրականությունից քերած հատվածների մեջ մնում է հիշել Զենոն Կալսեր նշանավոր Հենետիկոնը և նորա հաջորդ Անատոսի թուղթը, որոնցով 482 թ.-ից մինչև 518 թ. Քաղկեդոնի ժողովը լռելայն դատապարտության էր ենթարկվում»³⁰:

«Կնիք հաւատոյ» ժողովածուում կան նաև արժեքավոր վկայություններ մեր եկեղեցու նշանավոր աստվածաբան վարդապետների գրվածքներից, այդ թվում՝ Եզնիկ Կողբացուց երկու հատված, Հովհան Մանդակունու «Յովհաննու հայոց եպիսկոպոսապետի՝ Ապագոյց» կարևոր ճառից մի հատված, «որով և պարզվում է Մանդակունու բռնած դիրքը ժամանակի դավանական խնդիրների մեջ»³¹,

որպես հայ եկեղեցու ուղղափառության ջերմ պաշտպան և հակաքաղկեդոնական, և, վերջապես, Հովհան Մայրագոմեցու ամունը կրող «ի հանձն որ վասն չարչարանաց և աներկիտ մատնել զանձն» ճառից:

Այս բոլորի մասին սպառնիչ կերպով խոսելուց հետո, «Կնիք հաւատոյ»-ի հրատարակիչ և Մայր Աթոռի միաբան, հմուտ աստվածաբան և մատենագետ տ. Կարապետ եպիսկոպոսը, նշում է ինչպիսի ստեղծված պատմական պայմաններում, Դվինի հայրապետանոցում, դավանաբանական բուռն վեճերի ժամանակաշրջանում կազմվեց սույն կարևոր ժողովածուն, «առ ի պահպանութիւն որոյ պիտառեցաւ» «Կնիք հաւատոյ» ժողովածուն³², և որոշվեց նաև «եկող սերունդների բռնելիք ուղղությունը հաջորդ դարերում»³³, ուղղություն, որից երբեք չշեղվեց հայ եկեղեցին, ինչպես հավաստում է Օմենցին:

«Լուսաշաղի ճանապարհ առ Աստուած՝ հնազանդութիւն ընդհանուր հաւատացելոց Քրիստոսի, կազմեցին սուրբ Հարքն զկանոնական բանից դիտադրութիւն... Եւ մեզ ի մին պարտ է չարամաւ և չթողուլ ի բաց, և չառնել նորաձև ինչ... չխոնարհել յալ ազգաց քրիստոնէից յաւանդութիւնս»:

Մայր Աթոռի տպարանից լույս տեսած դավանաբանական ուսումնասիրություններն ու առանձին հրատարակությունները վստապացույցն են այն բանի, որ Հայց. եկեղեցին, իր գոյության սկզբից մինչև մեր օրերը, հավատարիմ է մնացել ընդհանրական եկեղեցու ուղղափառության և հավատի դավանության ու մեր կոսմոսի հայրապետների և վարդապետների ազգային-հայրենասիրական արքայան ավանդություններին, բանի որ «հաւատքն մեր ոչ է հնացեալ զի նորոգեացի, և ոչ է թերի՝ զի լրացի» (Սիմեոն Երևանցի):

²⁸ Նույն տեղ, էջ LI:

²⁹ Նույն տեղ, էջ LIX, նաև էջ XXXII—LVIII:

³⁰ Նույն տեղ, էջ LVI:

³¹ Նույն տեղ, էջ LVII:

³² Նույն տեղ, էջ LVII:

³³ Նույն տեղ, էջ LVIII:

